*Կ-860³-09.02.2021-ԱՍ-011/0*

**ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 29-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Սույն օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործերով ներկայացված հայցադիմումը պետք է պարունակի փաստական տվյալներ և փաստարկներ, որոնք առերևույթ հիմնավորում են խտրականություն որակվող վարքագծի կամ կարգավորման առկայությունը, իսկ խտրականությունը բացառող հանգամանքները ապացուցելու պարտականությունը դրվում է պատասխանողի վրա:»:

**Հոդված 2.** ~~Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 29.3 գլխում 216.6 հոդվածի 1-ին մասը ում «ոլորտում» բառը փոխարինել «եւ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտներում» բառերով:~~ Օրենսգրքի 29.3 գլխում 216.6 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հասարակական կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է հետևյալ ոլորտներում՝

1) շրջակա միջավայրի պահպանություն.

2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն:»:

***Հոդված 3 2.*** ~~Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության~~ Օրենսգրքի 29.3 գլխում 216.6 հոդվածի 2-րդ մասում «Կազմակերպությունը» բառը փոխարինել ~~«Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կազմակերպությունը»~~ «հասարակական կազմակերպությունը» բառերով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 29.3 գլխում 216.6 հոդվածի 2-րդ մասում «2-րդ մասով» բառերը փոխարինել «1-ին մասի 1-ի կետով» բառերով:

**Հոդված 5.** Օրենսգրքի 29.3 գլխում 216.6 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «2-րդ մասում» բառերը փոխարինել «1-ին մասի 1-ին կետում» բառերով:

**Հոդված 6.** Օրենսգրքի 29.3 գլխում 216.6 հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«3. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) խախտվել է հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի՝ հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավունքը կամ խախտվել է հաշմանդամություն ունեցող անձի խտրականությունից պաշտպանվելու իրավունքը և, որը, ելնելով առողջական վիճակից կամ այլ հանգամանքից չի կարող անձամբ ներկայացնել իր իրավունքները և օրինական շահերը դատարանում,

2) Կազմակերպության կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ և անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են,

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված ոլորտում:»:

**Հոդված 7.** Օրենսգրքի 29.3 գլխում 216.7 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն գլխով սահմանված գործերով ներկայացված հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված պահանջների, պետք է պարունակի տեղեկություններ սույն օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության մասին, ինչպես նաև հայցադիմումին, ի լրումն սույն օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի, պետք է կցվեն սույն օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասով նախատեսված հիմքերի առկայությունը հավաստող ապացույցներ:»:

~~***Հոդված 3.*** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 29.3 գլխի 216.6 հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ եւ 4-րդ մասերով՝~~

~~«3. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե համարվում է հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպություն (նրա կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ եւ անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են) եւ հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում:~~

~~4. Հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող հասարակական կազմակերպությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել հետեւյալ դեպքերում՝~~

~~1) խախտվել է հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի՝ հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավունքը,~~

~~2) խախտվել է հաշմանդամություն ունեցող անձի խտրականությունից պաշտպանվելու իրավունքը եւ, որը, ելնելով առողջական վիճակից կամ այլ հանգամանքից չի կարող անձամբ ներկայացնել իր իրավունքները եւ օրինական շահերը դատարանում:»։~~

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: